ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԴԵՂՁՈՒՏԻ ՄԻՋՆ.ԴՊՐՈՑ
ՊՈԱԿ

գ.Դեղձուտ (04206775)

Էլ.Փոստ deghcut-sm@yandex.ru

11/02/2022թ.

ՀՀ Արարատի մարզի մարզպետ
պարոն Ս. Թևոնյանին

Հարգարժան մարզպետ

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՀՀ Արարատի մարզի Դեղձուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում տեղի է ունենալու պատմության (21 ժամ) և ֆիզիկայի (10 ժամ) ուսուցչի թափուր տեղերի համար հայտարարված մրցույթը:

Կից ներկայացվում է հայտարարության տեքստը:

Հայտարարվում է մրցույթ՝ <<ՀՀ Արարատի մարզի Դեղձուտի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի պատմության (21 ժամ) և ֆիզիկայի (10 ժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:
Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում՝ (Ձև 1), մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)

- անձը հաստատող փաստաթուղթ,

-«Հանրակրթության մասին » ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)

-ինքնակենսագրություն (Ձև 5),

-թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ:

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են փետրվարի 9-ից մինչև փետրվարի 22-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10^{00}-ից 15^{00}-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա փետրվարի 25-ին՝ ժամը 14^{00}-ին, ՀՀ Արարատի մարզի Դեղձուտի միջնակարգ դպրոցում: Հասցեն՝ գ. Դեղձուտ, Հ. Շիրազի 43:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 094060558 հեռախոսահամարով:

Տնօրեն՝ / Ս. Մելքոնյան /